Yerevan, Republic of Armenia
2 Arshakuniats, 15 floor
tel. 568 968, 586 529 fax 528 752
news@aravot.am
www.aravot.am

օրաթերթ
հրատարակվում է 1994 թ.
գինը՝ 150 դրամ

# Առավոտ

aravot daily

51/4147/ 21 մարտի 2012 չորեքշաբթի

ISSN 1829-2224
12039

## Ա

# Խորհուրդ թեկնածուներին

Որքան շատ եմ լսում կամ կարդում պատգամավո-րության մեծամասնական եւ համամասնական թեկ-նածուների հայտարարությունները, այնքան շատ եմ հասկանում, որ նրանց մեծ մասը չի հասկանում, թե ինչու են ուզում հայտնվել Ազգային ժողովում: Որ դա չեն հասկանում Մանվելը, Սեյրանը, Լիսկան, Ծմակ-սը կամ Նավոն՝ դա միանգամայն բնական է: Նրանց մարդկանց մաղելու համար ես վաղուց առաջարկել եմ ներմուծել կրթական ցենզ հասկացությունը: Պատգամավորության թեկնածու գրանցվելու համար այդ դեպքում անհրաժեշտ կլինի գրել ոչ բարդ (7-րդ դասարանի մակարդակի) թելադրություն, եւ եթե հավակնորդը 10 կոպիտ սխալից ավելին անի, ապա նրան պարզապես չեն գրանցում: Այդքան խո-սում ենք պետական լեզվի կարեւորության, գրքի հա-մաշխարհային մայրաքաղաքի եւ հարակից այլ թե-մաների մասին եւ զլանում ենք ՀՀ բարձրագույն օրենսդիր մարմնի ներկայացուցիչներից պահանջել, որ նրանք այդ պետական լեզուն իմանան 7-րդ դա-սարանի աշակերտների չափով: Բաներ կան, որոնք մարդիկ պետք է անեն անձամբ՝ առանց բազմաթիվ ջիպերի եւ թիկնապահների. նման դժվար գործերից է՝ շարժել սեփական ուղեղի ծալքերը:

Բայց նույնիսկ գրագետ մարդկանց գերակշիռ մա-սը, ցավոք, լավ չի պատկերացնում, թե ինչ անե-լիք ունի խորհրդարանում: Նրանց ստանդարտ պա-տասխաններն են՝ կեղծավոր կամ անկեղծ. ուզում եմ կերտել ավելի գեղեցիկ, ավելի արդար, ավելի հզոր Հայաստան, ուզում եմ ունենալ հպարտ երկրի ար-ժանապատիվ քաղաքացիներ: Հրաշալի է: Բայց ին-չո՞ւ է պետք դրա համար հենց պատգամավոր դառ-նալ: Պատգամավորն, իմ կարծիքով, այն մարդն է, որն այդ հրաշալի նպատակներին հասնելու համար օրենքներ է մշակում: Իսկ դա կարող են անել միայն մասնագետները: Մասնագետներ՝ ոչ թե դիպլոմով (վերոհիշյալ ինտելեկտուալները կարող են իրենց համար մի քանի տասնյակ դիպլոմներ գնել), այլ իրական գիտելիքներով: Ես կարող եմ վերացական ցանկություն հայտնել՝ «ուզում եմ երաժշտություն գրել Մոցարտի նման», սակայն դրա անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայմանն է, որ ես իմանամ, թե ինչ-պես են գրվում նոտաները:

Գիտելիքները նույնպես բավարար չեն. պետք է լի-նի արժեքային համակարգ, որի հիման վրա մշակե-լով այդ օրենքները՝ պատգամավորները փորձում են հասնել իրենց հռչակած արդար, գեղեցիկ եւ քաղցր Հայաստանին: Պրիմիտիվ ասած՝ ազատականն այնպիսի օրենքներ է առաջարկում, որոնք խթանելու են բիզնեսը, սոցիալիստը փորձում է ստեղծել շուկա-յական հարաբերությունների պայմաններում մարդ-կանց սոցիալական իրավունքները պաշտպանող օրենքներ, իսկ ազգայնականը, ենթադրենք, մտա-ծում է, թե ինչպես պատերազմ հայտարարել Թուր-քիային եւ նվաճել Մասիս լեռը: Դրանք, իհարկե, կո-պիտ սխեմաներ են, կյանքն ավելի բազմազան է, բայց իրական օրենսդրական ջանքերն այս ուղղու-թյամբ պիտի ընթանան: Այնպես որ, այն թեկնածու-ներին, որոնք իսկապես ուզում են զբաղվել օրենսդ-րական գործունեությամբ, ոչ թե շարունակել գողա-նալ, կարելի է խորհուրդ տալ՝ մտածել, թե իրակա-նում ինչ է ձեր ուզածը եւ, ինչպես ասում են՝ սովո-րել, սովորել, սովորել:

ԱՐԱՄ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

# Ճանապարհային ոստիկանները չե՞ն տեսնում, որ մարզպետը օրենք է խախտում

Վայոց ձորի մարզպետ, ԲՀԿ-ական Սերգեյ Բագրատյանը Վայոց ձորի մարզպետարանին ամրակցված 031 LL 55 պետհամարանիշները օգտագործում է իր անձնական «Ռենջ ռովեր» եւ «Հունդայի Ալտիմա» մակնիշների ավտոմեքենաների վրա: Զարմանալի է, որ այս փաստը վրիպել է ճանապարհային ոստիկանների աչքից, քանի որ ՀՀ վարչական իրավախախտումների մասին օրենքն արգելում է նույն պետհամարանիշը մեկից ավելի տրանսպորտային միջոցի վրա օգտագործել: Նման իրավախախտում կատարող անձը ենթակա է վարչական պատասխանատվության:

Լուսանկարները՝ ԳԱԳԻԿ ՇԱՄՇՅԱՆԻ







## ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

### Սերնդափոխության ժամանակը

«Վաղուց ժամանակն է, որպեսզի քաղաքական դաշտում եւս տեղի ունենա սերնդափոխու-թյուն, եւ քաղաքական գործընթացներին ակտիվորեն մասնակցեն մարդիկ, ովքեր ունեն հա-մապատասխան կրթական ցենզ, աշխատանքային որոշակի փորձառություն եւ վճռականու-թյուն՝ իրենց մասնակցությունն ունենալու պետության զարգացմանը»,- «Ազատություն» ռադի-ոկայանի հարցին՝ ինչո՞վ էր պայմանավորված քաղաքական դաշտ անցնելու որոշումը, ասաց պաշտպանության նախարարության մամուլի արդեն նախկին խոսնակ Դավիթ Կա-րապետյանը: Aravot.am-ի հարցին՝ ինչո՞վ էր պայմանավորված ՕԵԿ-ի ընտրությունը, Դա-վիթ Կարապետյանն ասաց, որ ՕԵԿ-ն աչքի է ընկել իր օրինաստեղծ գործունեությամբ: Դի-տարկմանը՝ իր կարծիքով՝ մյուս կուսակցությունները պակա՞ս օրինաստեղծ աշխատանք են կատարել, Դավիթ Կարապետյանը պարզաբանեց, որ իր նկատմամբ ՕԵԿ-ից է հետաքրք-րություն եւ համամասնական ցուցակում ընդգրկվելու առաջարկ եղել:

Կարդացեք էջ 2:

### «Արմեն ջան, արի, այ ախպեր ջան...»

Երեկ հայրենի խորհրդարանի հերթական քառօրյա նիստի ավարտին, երբ ԱԺ կանոնա-կարգով պատգամավորների համար նախատեսված «հայտարարության ժամ»-ն ավարտվեց, ԱԺ նիստերի դահլիճում՝ հեռվից հեռու, բայց մտերմիկ ու ջերմ երկխոսություն տեղի ունեցավ ԱԺ փոխնախագահ, ՀՀԿ-ական Էդուարդ Շարմազանովի եւ «Ժառանգության» պատգամա-վոր, այդ կուսակցության հրապարակած համամասնական ցուցակում 16-րդ տեղում հանգր-վանած Արմեն Մարտիրոսյանի միջեւ: Վերջինիս դիմելով Շարմազանովը կանչեց՝ «Արմեն ջան, արի, արի այ ախպեր ջան, որ գնաս, վաղը-մյուս օրը քեզ էլ ո՞նց ենք գտնելու»: «Ժա-ռանգության» ներկայացուցչի պատասխանին էլ, թե՝ դեռ կհանդիպենք, Շարմազանովը թե-րահավատորեն արձագանքեց՝ «15-րդ համարն ես, ասում ես՝ կհանդիպենք»: Հիշեցնենք, որ այս երկու գործիչներն այս տարեսկզբին մրցակցում էին ԱԺ փոխնախագահի պաշտոնում ընտրվելու համատեքստում. Արմեն Մարտիրոսյանի թեկնածությունն առաջադրել էր «Ժա-ռանգությունը», իսկ Էդուարդ Շարմազանովին՝ ՀՀԿ խմբակցությունները:

Կարդացեք էջ 3:

## ԲԱՐԻ ԼՈՒՅՍ

### Ասուլիս

Այսօր, ժամը 13-ին, «Տեսակետ» մամուլի ակումբի հյուրն է ՀԱԿ անդամ Վահագն Խաչատրյանը:

### Եղանակ

Երեւան -4 +8, Շիրակ -13 +4, Կոտայք -13 +4, Գեղարքունիք -13 +4, Լոռի -9 +8, Տավուշ -4 +12, Արագածոտն լեռներ -13 +4, Արագածոտն նախալեռն. -6 +8, Արարատ -4 +9, Արմավիր -4 +9, Վայոց Ձոր լեռներ -13 +4, Վայոց Ձոր նախալեռն. -4 +9, Սյունիքի հովիտներ -2 +14, Սյունիքի նախալեռներ -6 +7, Արցախ -3 +10

## Լենինի նկարին ոչ միայն թարս է նայել, այլեւ այրել է նկարը

Երեկ Aravot.am-ը ՀՀԿ փոխնախագահ Ռազմիկ Զոհրաբյանից հետաքրքրվեց, թե չի՞ պատրաստվում անդամագրվել «Քաղբանտարկյալներ» իրավապաշտպան հ/կ-ին: Ռազմիկ Զոհրաբյանը պատասխանեց. «Ամբողջ հարցը նրանում է, որ իրենց քաղբանտարկյալներ չեմ համարում, որպեսզի մասնակցեմ նրանց միջոցառումներին: Իսկական քաղբանտարկյալներ ես համարում եմ նրանց, ովքեր պայքարել են Հայաստանի անկախության համար: Իսկ իրենք ընդամենը իշխանություն գալու, են էլ զարտուղի ճանապարհներով, գիտեք, «Մարտի 1»-ի ժամանակ ինչեր եղավ, ես նրանց քաղբանտարկյալ չեմ համարում: Թող նեղանան, թող նորից ինձ քննադատեն, բայց միեւնույն է: Մյասնիկ Մալխասյանը մասնակցել է պատերազմի, անկախության համար, ես դա գնահատում եմ, բայց երբ գալիս են ձողերով, փայտերով իշխանություն վերցնելու՝ մարդկանց ծեծելով, կռվի ճանապարհով՝ ես դա չեմ ընդունում: Նրանք քաղբանտարկյալ չեն, քրեական դատապարտվածներ են, որոնց ժամկետները լրացել է կամ համաներմամբ ազատվել են»:

Մեր դիտարկմանը, որ իրենք էլ Ձեզ քաղբանտարկյալ չեն համարում, ասում են, որ Լենինի նկարին մի հատ թարս նայելու համար դատվել եք, ձեզ սարքել եք ալամ-աշխարհի քաղբանտարկյալ, իրենց՝ հանցագործ, պարոն Զոհրաբյանը հակադարձեց. «Որ Լենինի նկարին թարս նայել եմ՝ դա ճիշտ են ասում, ոչ միայն թարս եմ նայել, այլեւ այրել եմ այդ նկարը: Բայց մինչեւ այդ ես եղել եմ ընդհատակյա գործունեությունում, մենք տպել ենք թերթեր, թռուցիկներ տարածել, մարդիկ ենք հավաքել ընդհատակում, որպեսզի այսօր ունենայինք կադրեր: Եվ այսօր, երբ դուք տեսնում եք Անդրանիկ Մարգարյանի նման կադրերի, Աշոտ Նավասարդյանի եւ ԱՄԿ-ի մյուս անդամների, նրանք հենց այդ կադրերն են, որ մենք կարողացանք տալ անկախության համար պայքարում: Այսինքն՝ այո, դրանք քաղկալանավորներ էին, այսինքն՝ Հայրիկյան, Մարգարյան, ես եւ էլի շատերը, ովքեր նստած էին: Բայց Խորհրդային Միության իշխանավորները մեզ չէին ճանաչում քաղկալանավոր, համարում էին որպես պետական հատուկ վտանգավոր հանցագործներ: Այնպես որ՝ թող Մալխասյան Մյասնիկը կամ ով էր ասում՝ թող ինձ համարեն պետական հատուկ վտանգավոր հանցագործ, բայց՝ նախկինում»:

Մեզ հետ զրույցում պարոն Զոհրաբյանը մեկնաբանեց նաեւ, թե ՀՀԿ 6 փոխնախագահներ ունենալու նպատակը որն է, չե՞ն ուզեցել մեկին նեղացնել, թե՞ շատ լինի՝ քիչ չլինի սկզբունքով են առաջնորդվել. «Քանի որ խորհուրդն ընդլայնվեց 140 հոգի արդեն, եւ կուսակցությունն արդեն 150 հազարանոց է, բնականաբար, կան ոլորտներ, որ պետք է ստասարկեին արդեն հավելյալ նախագահներ»:

Հ. ՋԵԲԵՋՅԱՆ

## Զեղչեր չեն անի, ոչ էլ «նիսյայով» եթեր կտան

Aravot.am-ի հետ զրույցում Գյումրու «Ցայգ» հեռուստաընկերության նախագահ Մարգարիտա Մինասյանը տեղեկացրեց, որ քաղաքական գովազդի մեկ րոպեն իրենց մոտ սահմանվել է 6 հազար դրամ, ներառյալ ավելացված արժեքի հարկը: Այն տրամադրվելու է մեծամասնական ընտրակարգով առաջադրվող թեկնածուներին: «Իհարկե, մենք նախկինում ավելի բարձր գներ ենք սահմանել, բայց նախկինում զեղչերի ավելի ճկուն համակարգ է աշխատել, էս դեպքում օրենքը չի թույլատրում մեզ ոչ մի տիպի զեղչեր կամ բոնուսային ինչ-որ ավել ցուցադրումներ տալ»,- ասաց մեր զրուցակիցը: Իսկ հնարավո՞ր է հեռուստատեսությունը թեկնածուների համար նիսյայով գործ անի. «Հնարավոր չէ, քանի որ դրանով առաջին հերթին մենք կվնասենք առաջադրվող թեկնածուին, որովհետեւ ինքն անմիջապես իր հիմնադրամից պիտի ուղղորդի գումարները հեռուստաընկերություն ու էնտեղից անմիջապես կտրոնները վերցնի»,- բացառեց տիկին Մինասյանը:

Ն. ԱՐԵՎՇԱՏՅԱՆ

# 2013-ին ՕԵԿ-ը կպաշտպանի Սերժ Սարգսյանին

### Երեկ հայտարարեց ՕԵԿ նախագահը, իսկ ՀՀ նախագահն էլ իր հերթին ասաց՝ «ՕԵԿ-ը վստահելի գործընկեր է»



Երեկ մարզահամերգային համալիրի մեծ դահլիճում, որտեղ շաբաթ օրը կայացել էր ԲՀԿ համագումարը, ՕԵԿ-ը տոնեց իր հիմնադրման 15-ամյակը: Բացի տոնական համերգից, երեկ այդ դահլիճում նաեւ բավականին հետաքրքիր իրադարձություններ տեղի ունեցան, որոնք ուրվագծում են հայաստանյան քաղաքական դաշտի զարգացումները՝ առաջիկա ընտրական շրջաններում: Այսպես, ՕԵԿ-ի 15-ամյակն իր ներկայությամբ պատվեց ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը, ով միջոցառմանը եկավ օդանավակայանից. նա վերադառնում էր Մոսկվայից: Նախագահը բեմ բարձրացավ Արթուր Բաղդասարյանի ու ՕԵԿ-ական երիտասարդների ծափերի ու ժպիտների ուղեկցությամբ: Ընդհանրապես, դահլիճում գերակշռում էին երիտասարդները: Արթուր Բաղդասարյանը նկատեց, որ անցած նախագահական ընտրություններում ՕԵԿ-ը «խոհեմ դիրքորոշում» որդեգրեց՝ փրկելով Հայաստանն արյունահեղությունից: Ասաց, որ նույն կերպ են շարունակելու գործել քաղաքական դաշտում եւ 2013 թվականի նախագահական ընտրություններում սատարելու են Սերժ Սարգսյանի թեկնածությունը:

Նախագահ Սերժ Սարգսյանն իր ելույթում անձնական եւ քաղաքական շնորհավորանքներից, բարեմաղթանքներից զատ՝ հայտարարեց. «ՕԵԿ-ը վստահելի գործընկեր է: Դժվար պահին կարելի է հենվել, կարելի է ձեզ հետ հաղթահարել բազում դժվարություններ: Մեր բոլորի աչքի առջեւ ՕԵԿ-ը հիմնադրվեց, ամրացավ, կայացավ ու շատ կարճ ժամանակահատվածում սկսեց ակտիվ դերակատարություն ունենալ մեր երկրի քաղաքական կյանքում: Եվ անմիջապես հայտ ներկայացրեց ու ինքն էլ այդ հայտը բավարարեց՝ դառնալով խորհրդարանական կուսակցություն, առաջատար քաղաքական ուժ: Ես վստահ եմ, որ դուք ունեք մեծ ներուժ, որ առաջիկա քաղաքական գործընթացներում դուք արժանապատվորեն կարողանալու եք ձեր մասին մեկ անգամ եւս հայտարարել, որովհետեւ քաղաքականությունն այդպիսի բան է՝ մշտապես պարտավոր ես ամրապնդել քո դիրքերը, մշտապես պարտավոր ես ապացուցել, որ այո, ուրիշներից ավելի լավն ես, ավելի կայուն ես, ավելի նպատակաուղղված ես եւ կարողանում ես քո առջեւ դրված խնդիրները հաղթահարել: Այս չորս տարիների ընթացքում, որ մենք միասին կառավարում ենք մեր երկիրը, մեկ անգամ եւս ես համոզվեցի, որ ՕԵԿ-ն, իրոք, վստահելի գործընկեր է: Սա շատ գնահատելի հատկանիշ եւ որակ է, որովհետեւ, գիտեք, շատ մարդիկ քաղաքականության մասին արտահայտվում են այնպես, ինչպես իրենք են մտածում. ասում են, որ... պետք է ասեմ՝ քաղաքականությունն անբարոյականություն է: Բայց նաեւ ՕԵԿ-ն ապացուցեց, որ՝ ոչ, քաղաքականությունը բարոյականություն է, եւ մարդը չի կարող երկուշաբթի օրը բարոյական լինել, երեքշաբթի օրը՝ անբարոյական»: Սերժ Սարգսյանը վստահություն հայտնեց, որ ՕԵԿ-ի որդեգրած ուղին բոլորին տանելու է դեպի ավելի լավ Հայաստան, որը կառուցվելու է նաեւ ՕԵԿ-ի ակտիվ մասնակցությամբ: Ի դեպ, թե Սերժ Սարգսյանը, թե Արթուր Բաղդասարյանը բավականին բարձր տրամադրությամբ էին: Ողջույնի եւ բարեմաղթանքների խոսք ընթերցվեց նաեւ ԵԺԿ նախագահ Վիլֆրիդ Մարտենսի անունից:

Մինչ այդ, ՕԵԿ նախագահը հրապարակեց կուսակցության համամասնական ցուցակի մի հատվածը: Այն գլխավորելու է Արթուր Բաղդասարյանը, ապա՝ Հեղինե Բիշարյան: ՕԵԿ երրորդ համարը արտակարգ իրավիճակների նախարար Արմեն Երիցյանն է, չորրորդը՝ գյուղնախարար Սերգո Կարապետյանը, յոթերորդը՝ ՀՀ տրանսպորտի եւ կապի նախարար Մանուկ Վարդանյանը, ութերորդը՝ ՊՆ մամուլի արդեն նախկին խոսնակ Դավիթ Կարապետյանը, իններորդը ՕԵԿ-ական պատգամավոր Խաչիկ Հարությունյանն է, տասնմեկերորդը՝ ՕԵԿ փոխնախագահ Միեր Շահգելդյանը: Հովհաննես Մարգարյանը կառաջադրվի Գյումրու թիվ 38 ընտրատարածքում: ՕԵԿ-ը մեծամասնականով կառաջադրի նաեւ 10-ից ավելի թեկնածուների, որոնց թվում է կապի եւ տրանսպորտի նախկին նախարար Էդուարդ Մադաթյանը: Ընդհանրապես, ՕԵԿ-ի եւ համամասնական, եւ մեծամասնական ցուցակներում քիչ չեն նոր դեմքերը:

ՆԵԼԼԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ

# «Որոշ մարդկանց որոշ տեղերը մրմռում են»

Հանրապետական կուսակցության համամասնական ցուցակի 19-րդ տեղը զբաղեցնող «Սահմանադրական իրավունք միություն» (ՍԻՄ) նախագահ Հայկ Բաբուխանյանից «Առավոտը» հետաքրքրվեց, թե ո՞ր արժանիքների համար է ՀՀԿ ցուցակի նման լավ տեղում հայտնվել: Պարոն Բաբուխանյանը նկատեց, որ «լավ տեղ» ասվածը հարաբերական է. «Ժամանակին «Իրավունք եւ միաբանություն» դաշինքի երրորդ տեղում եմ եղել, այնպես որ՝ «լավ» ու «վատ» տեղեր չկան: Կա աշխատանք, պարտավորություն ազգի առաջ, որը պետք է կարողանանք իրագործել: Ինչ վերաբերում է արժանիքներին, ապա իմ դրական եւ բացասական արժանիքները պետք է գնահատի ընտրողը, մեր ժողովուրդը»: Այդուհանդերձ, հիշեցրեց խորհրդարանական աշխատանքի փորձի մասին. «Ունենք համապատասխան փորձ, փորձառություն: 1990 թվականից մեր կուսակցությունը ներգրավված է այդ գործընթացներում, ես 25 տարեկանից եղել եմ ԱԺ երկու հանձնաժողովների անդամ: Ինչ վերաբերում է նրան, թե ինչո՞ւ գնացինք համագործակցության ՀՀԿ հետ, կամ ինչու ՀՀԿ-ն գնաց մեզ հետ համագործակցության... որովհետեւ կար գաղափարախոսության ընդհանրություն՝ ազգային պահպանողական արժեքների, ազգային պահպանողական գաղափարախոսության ընդհանրություն: Շատ բնական եւ բացատրելի դաշինք է սա»:

Խնդրեցինք մեկնաբանել որոշ տեղերից հնչող այն գնահատականները, թե ՀՀԿ-ի ցուցակում «քաղաքական դիակներ» են հայտնվել, նաեւ այն, որ այդ դիակների թվում իր անունն էլ է նշվում. «Կմեկնաբանեմ, որ որոշ մարդկանց որոշ տեղերը ցավում են այն բանի պատճառով, որ ՀՀԿ-ն ուժեղացնում է իր ցուցակը, ուժեղացնում է իր ներկայությունը, ստեղծում է համագործակցություն՝ լայն քաղաքական եւ հասարակական սպեկտրի հետ, եւ խորհուրդ կտայի այդ մարդկանց, որ իրենց որոշ տեղերը չմրմռան»:

Ի դեպ, պարոն Բաբուխանյանի կանխատեսումներով՝ ՀՀԿ-ն միայն համամասնական ընտրակարգով կհավաքի 50% ձայն, եւ խորհրդարանում կունենա ճնշող մեծամասնություն: Այս մտքին նա հանգել է նաեւ վերլուծելով Հրազդանի ընտրությունները, որտեղ գործում էր «բոլոր քաղաքական ուժեր՝ հանած ՀՀԿ» բանաձեւը, սակայն ՀՀԿ-ն հաղթեց:

ՄԵԼԱՆՅԱ ԲԱՐՍԵՂՅԱՆ

## ԲՀԿ ցուցակի 20 համարները հայտնի են

Երեկ ուշ երեկոյան ավարտված ԲՀԿ քաղխորհրդի նիստում հաստատվել է նաեւ «Բարգավաճ Հայաստան» կուսակցության համամասնական ցուցակը: Այս փուլում ձեւավորված ավանդույթի համաձայն՝ ԲՀԿ-ն էլ մասամբ հրապարակեց իր համամասնական ցուցակը: Այն կգլխավորի Գագիկ Ծառուկյանը: Երկրորդ տեղում է նախկին արտգործնախարար Վարդան Օսկանյանը, երրորդում՝ ԲՀԿ-ական նախարար Վարդան Վարդանյանը, ապա՝ Միավորված աշխատանքային կուսակցության նախագահ Գուրգեն Արսենյանը, Սամվել Բալասանյանը, Նաիրա Զոհրաբյանը, Վահե Հովհաննիսյանը, Հարություն Քուշկյանը, Քաղաքագետների միության նախագահ Հմայակ Հովհաննիսյանը: ԲՀԿ ցուցակի երկրորդ տասնյակում են Արամ Սաֆարյանը, Գագիկ Ծառուկյանի մամուլի խոսնակ Խաչիկ Գալստյանը, ՀՀ մշակույթի նախկին նախարար Թամար Պողոսյանը, Վահե Էնֆիաջյանը, Հայաստանի երիտասարդական կուսակցության նախկին նախագահ Վահան Բաբայանը եւ Հայաստանի առաջադիմական կուսակցության նախկին նախագահ Տիգրան Ուրիխանյանը:

Ն. Գ.

Առավոտ
a r a v o t d a i l y
ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 21.03.2012

# ԱԺ-ում «հայտարարությունների օր» էր

## Բայց դա մի քիչ նմանվեց նախընտրական քարոզարշավի

Երեկ, չնայած քաղաքական ուժերի նախընտրական տրամադրություններին ու ԱԺ-ում հայրենի օրենսդիրների սակավությանը, խորհրդարանը շարունակեց իր նիստերի հերթական քառօրյան ու քննարկեց մի շարք օրենքներում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին օրինագծեր եւ միջազգային պայմանագրեր: Ի թիվս այլ օրինագծերի՝ ընդունվեց ՀՀ նախագահի առարկությամբ ԱԺ-ին վերադարձված «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրինագիծը, վավերացվեց չորս համաձայնագիր:

Սրանց թվում բացառություն էր միայն «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» օրինագիծը, որը ԱԺ նախագահ Սամվել Նիկոյանը այդպես էլ քվեարկության չդրեց, քանի որ ՀՀԿ-ականները մտավախություն ունեին, որ օրենքն ընդունելու համար անհրաժեշտ քվորում կարող է չապահովվել, եւ օրինագիծը հերթական անգամ կարող է տապալվել: Քվորումն ապահովելուն չօգնեց նաեւ ՀՀԿ խմբակցության կողմից մինչեւ քվեարկությունը վերցրած 20 րոպեանոց ընդմիջումը: Այս օրինագիծը օրվա երկրորդ կեսին քննարկված այլ օրինագծերի հետ միասին քվեարկության է դրվելու այսօր:

Խորհրդարանը երեկ քննարկեց, բայց այսօր շարունակելու ակնկալիքով կիսատ թողեց Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի տարեկան հաշվետվությունը, որը ներկայացրեց հանձնաժողովի նախագահ Արտակ Շաբոյանը: Վերջինս ի պատասխան իրեն ուղղված հարցերից մեկի՝ արդյոք հանձնաժողովի արդյունավետ գործունեության համար անհրաժե՞շտ են օրենսդրական փոփոխություններ, ասաց, թե այդպիսի փոփոխություններ, իհարկե, անհրաժեշտ են, ու հավելեց, թե «եվրոպացի բոլոր փորձագետները միանշանակ պնդում են, որ անհրաժեշտ են օրենսդրական փոփոխություններ, եւ խոսքը վերաբերում էր հանձնաժողովի կողմից ստուգումներ իրականացնելու իրավասությանը»: Նա օրինակ բերեց, թե եվրոպական բոլոր երկրների օրենսդրությունը տնտեսական մրցակցության պաշտպանության մարմիններին օրենսդրությամբ նման գործառույթ վերապահում է: Շաբոյանը կարեւորեց նաեւ հանձնաժողովին պետական օժանդակություն ցուցաբերելը: «Այլ երկրների մրցակցության պաշտպանության մարմինները մեծ չափով պետական օժանդակություն են ստանում, եւ նրանք համապատասխան իրավասություն պետք է ունենան՝ ուսումնասիրելու եւ անհրաժեշտության դեպքում որեւէ գործունեություն արգելելու համար»,- ասաց ՏՄՊՊՀ ղեկավարը՝ դարձյալ հավելելով, թե սրա վերաբերյալ եւս օրենսդրական փաթեթ է պատրաստվում, որը կներկայացվի խորհրդարանի քննարկմանը:




Հաշվետվության շուրջ քննարկումները թողնվեցին այսօրվա նիստին, որովհետեւ ԱԺ կանոնակարգի համաձայն՝ պատգամավորները հստակ նախատեսված ժամին պիտի հայտարարություններով հանդես գային: Այդ իմաստով երեկ ԱԺ-ում «Ժառանգություն» կուսակցության բենեֆիսն էր. հայտարարությունների համար հերթագրվեց խմբակցության 5 պատգամավոր՝ Լարիսա Ալավերդյան, Արմեն Մարտիրոսյան, Ստեփան Սաֆարյան, Զարուհի Փոստանջյան ու Անահիտ Բախշյան: Հայտարարություն արեցին նաեւ ԱԺ փոխնախագահ Էդուարդ Շարմազանովն ու ԲՀԿ-ական պատգամավոր Ռուբեն Գեւորգյանը: Նկատի ունենալով, որ «հայտարարությունների ժամն» առաջիկա ԱԺ ընտրություններից առաջ, ըստ էության, վերջինն է, բոլոր ելույթներն էլ այս կամ այն կերպ առնչվում էին հենց ընտրություններին: Հեռակա՝ ելույթային բանավեճ ծավալվեց «Ժառանգության» ներկայացուցիչ Արմեն Մարտիրոսյանի եւ ՀՀԿ-ական Էդուարդ Շարմազանովի միջեւ (ելույթները կարող եք կարդալ Aravot.am կայքում՝ http://www.aravot.am/2012/03/20/50497/): Նրանցից առաջինը փաստարկներ էր բերում՝ պնդելով, թե իշխանությունը, մեղմ ասած, վատն է եւ վատ է աշխատել, երկրորդի ելույթում լրիվ հակառակ պնդումներն էին արվում: Առաջինն իր ելույթը եզրափակեց՝ «Փոխվե՛ք, որ հավատանք»-ով, երկրորդը՝ ՀՀԿ-ի նախընտրական կարգախոսով. «Հավատա՛նք, որ փոխենք»-ով: ԲՀԿ-ական Ռուբեն Գեւորգյանն էլ նշեց, թե միայն արդար ու թափանցիկ ընտրությունների պարագայում Հայաստանը աշխարհաքաղաքական դաշտում բարձր վարկանիշ կունենա, որը նպաստավոր կլինի նաեւ մեր հիմնախնդիրների լուծմանը: Նաեւ հայտարարեց, թե ԲՀԿ-ն ամեն ինչ անելու է ոչ թե՝ ըստ իշխանության կարիքի, այլ՝ ըստ ժողովրդի կամքի, որպեսզի ընտրություններն անցնեն արդար:

«Ժառանգության» պատգամավոր Զարուհի Փոստանջյանն էլ իր ելույթում շեշտելով, թե այս գումարման ԱԺ աշխատանքները մոտենում են ավարտին՝ փորձեց ի մի բերել հայրենի խորհրդարանի գործունեությունը, որից միայն տխուր պատկեր ստացվեց: «Մեր քսանամյա անկախության վերջին 5 տարիների ընթացքում այս խորհրդարանի կողմից ընդունված փաստաթղթերը ոչ միայն արձանագրեցին հայ ժողովրդի եւ հայ մարդու հետ խորհրդարանական մեծամասնության անհաղորդ լինելը, այլ նաեւ փաստեցին չար, նենգ եւ անարդարացի լինելու մասին: Շատ ցավալի է, որ պետք է հիմնավորեմ չար, նենգ եւ անարդարացի լինելու մասին իմ կարծիքը:

Եվ այսպես. այս հինգ տարիների ընթացքում փորձ կատարվեց հայ մանուկից օտարել մայրենի լեզվով ուսուցում ստանալու իրավունքը՝ արմատավորելով օտարալեզու դպրոցները: Փորձ կատարվեց ցեղասպան Օսմանյան կայսրության իրավահաջորդ Թուրքիայի Հանրապետության ձեռամբ օրինականացնել հանցագործության պտուղները, որով պետք է ճանաչվեր Թուրքիայի հետ ներկայիս գործող քեմալաբոլշեւիկյան սահմանը. թուրքական արձանագրությունները, որոնք, մինչ օրս գտնվելով ԱԺ մեծ օրակարգում, տրորում են հայ մարդու արժանապատվությունը: Այս խորհրդարանը մերժեց մեր քսանամյա երկրորդ հայկական պետության՝ Արցախի Հանրապետության ճանաչումը՝ հավանություն տալով Մադրիդյան սկզբունքներին, որով նախատեսվում է սրբազան հայրենիքի հողերի օտարում, այս խորհրդարանը բավարարեց պաշտոնեական դիրքի չարաշահմամբ ներկայացված անօրինական միջնորդագիրը, որով չորս պատգամավորներ հանձնվեցին անարդար եւ բիրտ մամլիչ համակարգի ճիրաններին: Այս խորհրդարանը հավանություն տվեց ՀՀ նախագահական իշխանությունը ներկայացնող ապօրինի հրամանագրին, որով պաշտոնապես օգտագործվեցին ՀՀ զինված ուժերը, այս խորհրդարանում հայտարարվեց, որ 2008 թվականի մարտի 1-ի էջը փակվել է, թեեւ որեւէ մեկը դրա համար պատասխանատվություն չի կրել, երբ կյանքի իրավունքի, անձի անձեռնմխելիության, խոսքի ազատության, հավաքների ազատության նկատմամբ ոտնձգությունների իրականացման համար 10 մարդ զոհվեց, բազմաթիվ մարդիկ ստացան մարմնական վնասվածքներ եւ տեւական ժամանակ ապօրինաբար գտնվեցին բանտախցերում:

Չար եք, նենգ եք, անարդարացի եք՝ այնուամենայնիվ մարդ եք: Ես սիրում եմ մարդկանց: Ես չեմ սիրում նրանց արատները»,- իր ելույթն այսպես եզրափակեց Փոստանջյանը: Ու մինչ «Ժառանգության» մյուս պատգամավորը՝ Անահիտ Բախշյանը, կմոտենար ամբիոնին՝ ԱԺ փոխնախագահի Էդուարդ Շարմազանովը նախագահությունից արձագանքեց այս ելույթին՝ ասելով, թե՝ դե, «Ժառանգության» վերջին ելույթներն են, իրար հրաժեշտ ենք տալիս: Անահիտ Բախշյանը, որ արդեն հասցրել էր ամբիոնին մոտենալ՝ վրա բերեց. «Հա, աչքիդ ա երեւում»:

Խորհրդարանն այսօր կշարունակի իր աշխատանքը: Առավոտյան քվեարկության են դրվելու ոչ միայն «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» օրինագիծը, այլեւ «Մարդու վերարտադրողական առողջության եւ վերարտադրողական իրավունքների մասին» օրենքում ՀՀ կառավարության կողմից առաջարկված փոփոխությունների նախագիծը, որին ԱԺ գլխադասային հանձնաժողովը դրական եզրակացություն է տվել: Հիշեցնենք, որ այս օրենքով կարգավորվում են փոխնակ (սուրրոգատ) մայրությանն առնչվող հիմնահարցերը:

ՆԱԻՐԱ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ

## ՄԵԿ ԼՈՒՐ

### Քոչարյան-Պուտին հանդիպումը ՀՀԿ-ի համար վտանգ չի ներկայացնում

Օրերս ՀՀ նախկին նախագահ Ռոբերտ Քոչարյանի մամուլի խոսնակ Վիկտոր Սողոմոնյանը հաստատել էր տեղեկությունը, թե Քոչարյանն ու ՌԴ նորընտիր նախագահ Պուտինը դեմ առ դեմ հանդիպել են, եւ ըստ լրատվամիջոցներում տարածված տեղեկության, որը Սողոմոնյանը հերքել էր՝ այն, որ նրանք քննարկել են Հայաստանի նախընտրական իրավիճակը, չի համապատասխանում իրականությանը:

Aravot.am-ը երեկ ՀՀԿ փոխնախագահ Գալուստ Սահակյանին հարցրեց՝ ՀՀԿ-ն անհանգստացած չէ՞ հայաստանյան ընտրություններից առաջ տեղի ունեցած այդ հանդիպման փաստից. «Ընդհանրապես ես միշտ հանդիպումներում դրական բան եմ տեսնում ու չեմ կարծում, որ որեւէ հայ կա աշխարհում, որը որեւէ տեղ հանդիպի ու դա պետության համար վտանգ դառնա»: Մեր պնդմանը՝ պետությանը չի վտանգի, իսկ ՀՀԿ-ի՞ն, Սահակյանն արձագանքեց. «Չեմ կարծում, որ դրանից ՀՀԿ-ին վտանգ կպառնա: ՀՀԿ-ին մի կողմ դնենք: Վտանգները բոլորի համար են, մեր խնդիրը միայն պետությունն է եւ նրա արժեհամակարգը: Մենք այդ ճանապարհով ենք շարժվում»:

Ն. ՄԱՄԻԿՈՆՅԱՆ

# ՀԿԿ-ն ու ՀԱԿԿ-ն իրենց միասնական ցուցակը կներկայացնեն 2 օրից

Մարտի 17-ի պլենումում Հայաստանի կոմունիստական կուսակցության բյուրոն հաստատել է ՀԿԿ համամասնական ցուցակը: Հիշեցնենք, որ Հայաստանի կոմունիստական կուսակցությունը եւ Հայաստանի առաջադիմական կոմունիստական կուսակցությունը առաջիկա խորհրդարանական ընտրություններին մասնակցելու են միասնական ցուցակով: Կոմունիստների մոտ 60 հոգանոց ցուցակի առաջին հորիզոնականը զբաղեցնում է ՀԿԿ ԿԿ առաջին քարտուղար Ռուբեն Թովմասյանը, երկրորդ տեղում է ՀԱԿԿ կենտկոմի առաջին քարտուղար Վազգեն Սաֆարյանը, երրորդ տեղում՝ ՀԿԿ քաղկոմի քարտուղար Տաճատ Սարգսյանը, չորրորդը՝ Լենինականի ԿԿ քարտուղարը, հինգերորդը՝ ՀԿԿ ԿԿ երիտթեւի ղեկավարը:

Aravot.am-ի հետ զրույցում ՀԿԿ ԿԿ առաջին քարտուղար Ռուբեն Թովմասյանը տեղեկացրեց, որ ամփոփվելու են հանգանակության արդյունքները: Հիշեցնենք, որ ընտրագրավը վճարելու համար կոմունիստները հանգանակության առաջարկով դիմել էին իրենց համախոհներին: Վաղը-մյուս օրն արդեն, երբ ի մի բերվեն բոլոր փաստաթղթերը, ՀԿԿ-ն իր համամասնական ցուցակը կներկայացնի ԿԸՀ: Մեծամասնական ընտրակարգով այս երկու կուսակցություններից առաջադրումներ չեն լինի: Մեր հարցին՝ չե՞ք վախենում օլիգարխների, մականունավորների եւ քրեական հեղինակությունների հետ պայքարի մեջ մտնելուց, Ռուբեն Թովմասյանը պատասխանեց. «Ես ոչ մի բանից չեմ վախենում: Ժողովուրդն էլ արդեն զզվել է դրանցից: Ես ասում եմ՝ բերելու եմ ձեզ անվճար կրթություն, առողջապահություն, սոցիալական արդարություն… սրանցից ես ինչի՞ պիտի վախենամ: Թող վախենան այն մարդիկ, ովքեր գողել են ու դիզել»:

Թովմասյանը նաեւ պարտվելուց չի վախենում. «Մարդ որ մտնում է պայքարի մեջ, պետք է մտածի, որ պարտվել էլ կա, իսկ եթե չես մտնում պայքարի մեջ, ի սկզբանե ես պարտվում»:

ՀԱԿԿ ԿԿ առաջին քարտուղար Վազգեն Սաֆարյանի կարծիքով՝ կոմունիստներն անպայման հաջողություն են գրանցելու այս ընտրություններում, այլապես չէին մասնակցի դրանց: Իսկ թե ի՞նչ է հուսադրում, որ հաջողություն են գրանցելու, ընկեր Սաֆարյանը նկատեց. «Այն, որ երկրում սոցիալական լարվածություն կա, գործազրկություն, արտագաղթ: Խնդիրներ, որոնց մասին ԱԺ-ում բարձրաձայնումները քիչ են եւ անհետեւողական: Ես կարծում եմ, որ կոմկուսի անցած 70 տարիների ճանապարհը, աշխատատեղերի ապահովման, բուժսպասարկման, կրթական համակարգերի, այսինքն, անցյալի իրողությունները եւ դրանց որոշ հիմնադրույթների վերականգնման համար մղած մեր հետեւողական գործունեությունը ժողովուրդը պետք է ըստ արժանվույն ընկալի եւ ձայն տա: Մենք այն ուժն ենք, որ կարող ենք սոցիալական արդարության խնդիրները բարձրաձայնել ԱԺ-ում եւ հետամուտ լինել դրանց լուծման համար»: Վազգեն Սաֆարյանը նաեւ ասում է, որ իրենց մասնակցությամբ այս ընտրություններին փորձելու են «ժողովրդի մեջ ներարկել քաղաքական կուլտուրա», որպեսզի այլեւս տեղի չտան եւ տուրք չտան ամեն տեսակի հեղինակություններին ու նրանց մատուցած «րոպեական ծառայություններին», ազատ կողմնորոշվելու իրենց իրավունքը պաշտպանեն: Կոմունիստները քարոզելու են մնայուն արժեքներ:

Ն. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ա
a r a v o t d a i l y
ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 21.03.2012



# Գյուղերը վերջնականապես կդատարկվեն

## Եթե ՀՀ կառավարությունը ագրարային քաղաքականությունը չփոխի

Համլետ Պետրոսյանը գյուղատնտեսի 35 տարվա փորձ ունի եւ այսօր արդեն, որպես մասնագետ, կարող է ասել, որ եթե մի 2-3 տարի էլ այսպես շարունակվի, մեր գյուղերը վերջնականապես կդատարկվեն: Նրա կարծիքով՝ ՀՀ կառավարության վարած ագրարային սխալ քաղաքականության հետեւանքով գյուղատնտեսական ապրանքների գները բարձր են, օրենքների բացակայության պատճառով էլ մարդիկ չեն կարողանում ձեւավորել ֆերմերային տնտեսություններ:

«Սիրտս ցավում է: Հերթը հասել է Արարատյան հարթավայրին: Եթե տարիներ առաջ, երբ հողերը նոր էին սեփականաշնորհվել, վարելահողերի ընդամենը 10-15%-ը չէր մշակվում, ապա այսօր գյուղպիտանի հողերի 40%-ն անմշակ է: Գյուղացին բազմաթիվ խնդիրների առաջ է կանգնած»,- «Առավոտի» հետ զրույցում իր մտահոգությունը հայտնեց Հ. Պետրոսյանը: Նրա համոզմամբ՝ մշակվող հողերի մնացած մասն էլ անարդյունավետ է օգտագործվում, քանի որ այսօր գյուղացու համար չկա հստակ մշակված քաղաքականություն, որը կապահովի գյուղի եւ գյուղատնտեսության զարգացումը: Ռոստովում բուհն ավարտած եւ գյուղատնտեսության թեմայով դիպլոմային աշխատանք հանձնած Հ. Պետրոսյանը ՀՀ կառավարությանն այնպիսի ծրագիր է առաջարկում, որն իրագործելու դեպքում, նրա համոզմամբ, գյուղատնտեսության ոլորտում հեղաշրջում կկատարվի: Գյուղատնտեսությունը փրկելու՝ մասնագետի ծրագրի մեխը սեփականաշնորհված հողերի խոշորացումն է: «Դա շատ դժվարին գործ է, բայց երկրի համար շատ կարեւոր նշանակություն ունեցող գործընթաց է: Պետք է ստեղծվեն կոոպերացիաներ, որոնք զուտ սեփականատիրական ձեւով են առաջացել: Այսօր մարդիկ հնարավորություն չունեն մեծ հողակտորներ գնել, որպեսզի դրա վրա ձեւավորեն ֆերմերային տնտեսություն: Եթե գյուղացիական տնտեսությունները միավորվեն կամովին եւ ստեղծեն 25-30 հեկտարից ավելի գյուղացիական տնտեսություններ, աշխատանքները կկատարվեն ավելի մատչելի, ավելի հեշտ եւ ավելի եկամտաբեր կլինի: Կոոպերատիվները կկարողանան մեծածախ առեւտրի համար խոշոր ընկերությունների հետ բերքը իրացնելու պայմանագրեր կնքել: Միավորման պարագայում սեփական նյութատեխնիկական բազան էլ կարող են ստեղծել: Թե չէ՝ 1 հեկտար հողը վարելու համար ստիպված են տեխնիկա վարձակալել, ինչը նույնպես նպաստում է, որ գյուղմթերքի գինը բարձր լինի»,-վստահեցնում է գյուղատնտեսը: Նրա հաշվարկներով՝ կոոպերացիաներ ստեղծելու դեպքում 20-25%-ով գյուղատնտեսական ապրանքների ինքնարժեքը կնվազի:

Որպեսզի մարդիկ արտադրական կոոպերացիաները չշփոթեն խորհրդային տարիներին գործող կոլխոզ-սովխոզների հետ, Հ. Պետրոսյանը հստակեցնում է. «Միանգամայն տարբեր են այս կոոպերացիաները: Հիմա կոոպերացիայի անդամներն են որոշելու բերքի վաճառքի գները, իրենք են վերահսկելու ողջ գործընթացը»:

Այդուհանդերձ, գյուղատնտեսը գտնում է, որ ներկայիս կոոպերացիաների մասին նոր կանոնադրություն պետք է մշակվի՝ այն համապատասխանեցնելով ներկայիս իրավիճակին. «Մտնելով այդ կոոպերացիաների մեջ՝ գյուղացին պետք է համոզված լինի, որ սեփականության իր իրավունքը չի խաթարվում, որ նրա աշխատանքային իրավունքը չի խաթարվում, նրանց աշխատավարձը չի գողացվում եւ այլն»:

Հ. Պետրոսյանի ներկայացմամբ՝ մի շարք օրենքներ պետք է ընդունվեն, տեղական ինքնակառավարման մարմինների մասին օրենքում էլ փոփոխություններ կատարվեն. «Ագրարային քաղաքականության մեջ պետք է ներգրավված լինեն ողջ տեղական ինքնակառավարման մարմինները եւ այլ աջակցող ու պատասխանատվություն կրող կառույցներ: Բայց այսօր նրանք գյուղի ու գյուղատնտեսության համար ոչինչ անել չեն կարող, քանի որ օրենսդրությամբ բացակայում են նրանց պարտականությունները: Գյուղապետարանները հարկահավաքի կարգավիճակից միաժամանակ պետք է դառնան կոոպերատիվ ֆերմերներին աջակցող կառույցներ»:

Գյուղատնտեսի խոսքերով՝ կոոպերացիաներ հիմնելով՝ մեր երկրի իշխանությունները մի կարեւոր խնդիր էլ կարող են լուծել. «Ունենալով մի X քանակի կոոպերացիաներ՝ կկարողանան ծրագրավորել, թե մեզ վերջապես ինչ է պետք: Այսինքն՝ կարտադրվեն այն կուլտուրաները, որոնք ե՛ւ մեր երկրում, ե՛ւ դրսում իրականում պահանջարկ ունեն: Մեր երկրի պարենային պահանջները լիարժեք բավարարելուց հետո մեր արտադրությունը կուղղենք այն մթերքներին, որոնք կարող ենք արտահանել: Ուղղորդված ագրարային քաղաքականությունը գյուղացու համար շահույթ կապահովի, ու մարդիկ կնվիրվեն իրենց հող ու ջրին ու կաշխատեն: Դա նաեւ աշխատատեղերի հարցը կլուծի»: Գյուղացուն տարերային աղետների հետեւանքներից փրկելու համար էլ մասնագետը կառավարությանն առաջարկում է ապահովագրական ծառայություն ստեղծել. «Պետք է հաշվարկվի մի օպտիմալ գումար 1 հեկտարի չափով եւ գյուղացուց գանձվի: Պետք է հաշվարկ կատարենք, թե վերջին 20 տարում որքան աղետներ ենք ունեցել, հանենք դրա միջինացված թվերը եւ որոշակի «պրոգնոզ» կարող ենք կազմել, թե միջին հաշվով 1 տարում ինչքան վնաս կունենանք եւ ինչքան գումար կկազմի»:

Իսկ այն գյուղացիները, որոնք կգլանան կամ կհրաժարվեն հողը մշակել, պարոն Պետրոսյանն առաջարկում է նրանց նկատմամբ ադմինիստրատիվ մեթոդներ կիրառել. «Ճիշտ է, հողը մերն է, բայց հողը մեր բոլոր ժամանակներում տվյալ երկրի հարստությունն է, եւ եթե հարստությունն այնտեղ դրված է եւ չի ծառայում մեր երկրին, ուրեմն այդ հողը պետք է վերցնել նրանցից եւ մշակել: Սակայն, համոզված եմ, այդպիսի մարդիկ քիչ կլինեն, քանի որ եթե գյուղատնտեսությունը շահավետ լինի գյուղացու համար, ապա մարդիկ մեծ ոգեւորությամբ դրանով կզբաղվեն»:

ԼՈՒՍԻՆԵ ԲՈՒԴՂՅԱՆ



### Beeline Extreme 2012՝ Իջեւանում

«ԱրմենՏել» ընկերությունը եւ էքստրեմալ սպորտի «Ադրենալին» ասոցիացիան հայտարարում են Beeline Extreme Fest 2012 էքստրեմալ սպորտի գարնանային փառատոնի անցկացման մասին: Միջոցառումը տեղի կունենա մարտի 25-ին, Իջեւան քաղաքում՝ Վասիլյան եւ Մելիքբեկյան փողոցներում, ինչպես նաեւ «Մայր Հայաստան» արձանին հարող տարածքում: Փառատոնի շրջանակում կանցկացվեն էքստրեմալ տարբեր մարզաձեւերի մրցումներ եւ ցուցադրական ելույթներ: Հանդիսատեսին կներկայացվեն Drift, Off-Road 4X4, Drag-Racing դասերում վարորդների ելույթներ, ինչպես նաեւ մոտո-շոու եւ այլն:

Էքստրեմալ սպորտի «Ադրենալին» ասոցիացիայի նախագահ Արտաշես Ստեփանյանը հրավիրեց ավտոսիրահարներին մասնակցել միջոցառմանը եւ ցուցադրել մեքենա վարելու վարպետությունը, նշելով, որ առաջիկա միջոցառումը կդառնա տոն Իջեւանի բնակիչների եւ հյուրերի համար:

Beeline Extreme Fest 2012 փառատոնին կարող են մասնակցել բոլոր ցանկացողները՝ ավտոսպորտի վարպետներն ու սիրահարները: Մրցակիցների գրանցումը կատարվում է մինչեւ մարտի 23-ը՝ էքստրեմալ սպորտի «Ադրենալին» ասոցիացիայի 010 228085 հեռախոսահամարով:

### Նոր Նորքում ջուր չի լինի

«Երեւան Ջուր» ընկերությունը տեղեկացնում է իր հաճախորդներին եւ սպառողներին, որ, պլանային շինարարական աշխատանքների հետ կապված, ս.թ. մարտի 22-ին, ժամը 09.00-21.00-ը կդադարեցվի Նոր Նորքի 2-րդ զանգվածի եւ հարակից տարածքների ջրամատակարարումը: Ընկերությունը հայցում է սպառողների ներողամտությունը պատճառված անհանգստության համար եւ կանխավ շնորհակալություն հայտնում ըմբռնման համար:

# 3 անչափահասների նպաստը կտրել են

## Պատճառաբանել են, որ նրանք գիշերօթիկ են հաճախում

Ամալյա Թումանյանի 3 անչափահաս երեխաները զրկվել են 3 ամսվա նպաստից: Ձմռան ցուրտ երեք ամիսներին ընտանիքի անդամները, որոնք մինչ այդ գոյատեւել են 74 հազար դրամ նպաստով, ոչ նորմալ սնվել են, ոչ էլ կոմունալ վարձերն են կարողացել վճարել: Գորիսի սոցիալական ծառայության տարածքային գործակալությունը ընտանիքին պատճառաբանել է, որ 3 երեխաները հաճախում են գիշերօթիկ դպրոց:

Ընտանիքի մայրը՝ տիկին Ամալյան, բազմազավակ մայր է, 7 անչափահաս երեխա ունի, սակայն նպաստից զրկվել են 3-ը: Մնացած 4 երեխաների նպաստը 40 հազար դրամ է: Մեզ հետ զրույցում տիկին Ամալյան պատմեց, որ մինչ նպաստից կտրելն էլ երեխաները գնում էին այդ դպրոցը, բայց էլի ստանում էին նպաստ. «Էդ պատճառաբանությունը, որ երեխեքը տունը՝ Շինուհայր գյուղում չեն մնում, Սիսիանի գիշերօթիկն են գնում, անհիմն է: Նրանք ամեն շաբաթ-կիրակի տուն են գալիս, էդ երեխաներին հագուստ է պետք, սնունդ է պետք, իսկ նպաստը նույնիսկ դրա համար չէր հերիքում»: Կնոջ ներկայացմամբ՝ նախորդ տարվա դեկտեմբերից մինչ օրս երեխաները նպաստ չեն ստանում. այն վերականգնելու համար մի քանի անգամ դիմել է Գորիսի տարածքային գործակալություն, սակայն մերժվել է. «Տենց էլ մի կարգին պատասխան չեն տալիս, մի նորմալ հիմնավորում չեն տալիս, որ հասկանամ՝ ինչ անեմ»: Տիկին Ամալյայի պատմելով՝ մեծ ընտանիքով ապրում են 1 սենյականոց բնակարանում, այն էլ՝ վարձով: Ամեն ամիս, նպաստը ստանալուց հետո, 2 պարկ ալյուր են գնում, որ հաց թխի, մի քիչ գումար տնտեսի՝ տան վարձի ու ծախսած էլեկտրաէներգիայի գումարը կարողանա վճարել. «40 հազարով ես ի՞նչ կարամ անեմ: Էս թանկ ու կրակ երկրում 40 հազար դրամով անգամ մի հոգին չի կարա ամբողջ ամիսը ապրի, բա 9 հոգով ո՞նց ապրենք: Ես ու ամուսինս չենք աշխատում, գործ էլ չկա, ի՞նչ աշխատենք: Ո՛չ անասուն ունենք, ո՛չ էլ հողամաս: Տնամերձ հողում մի քիչ կանաչի ու մի երկու բան ենք ցանում, բայց դրանով ապրել չի լինի: Լավ ա՝ փեշի համար հարեւանները, բարեկամները ու ծանոթները ամեն մեկը մի քիչ փայտ են տալիս, վառում՝ տաքանում ենք»:



Բազմազավակ ընտանիքը 40 հազար դրամ նպաստի հույսին է:

Մեր հարցերին ի պատասխան՝ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունից «Առավոտին» հայտնեցին, որ գիշերօթիկ դպրոց հաճախելու համար նպաստից չեն կտրում: Իսկ Գորիսի սոցիալական ծառայության տարածքային գործակալության պետ Արա Միքայելյանն էլ մեզ հետ զրույցում հավաստիացրեց, որ 3 անչափահաս երեխաների նպաստը կվերականգնվի այս ամսվա 25-ից: Իսկ թե ինչո՞ւ են զրկել նպաստից՝ մեր հարցին պարոն Միքայելյանը պատասխանեց. «Շաբաթվա 5 օրը երեխաները գյուղում չեն, այսինքն՝ իրենք ուրիշ համայնքում են գիշերօթիկ դպրոց գնում, ու այն ժամանակ իրենց տվյալները մեր բազայում մուտքագրված չէին: Հիմա մուտքագրվել են, ու կստանան նպաստ»:

ՆԵԼԼԻ ԲԱԲԱՅԱՆ

Առավոտ aravot daily
ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 21.03.2012

# Զրպարտել են երեխայի

## Դատարանը ձայնագրության մեջ վիրավորանք ու զրպարտանք պարունակող տեղեկություններ չի հայտնաբերել

Վանաձորցի Թամարա Ադամյանը դիմել է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ պահանջելով բեկանել Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի՝ հօգուտ Վանաձորի թիվ 11 ավագ դպրոցի տնօրենի եւ ուսուցիչների նկատմամբ կայացրած վճիռն ու իր 14-ամյա դստերը զրպարտելու ու վիրավորելու հայցադիմումով գործն ուղարկել նոր կազմով քննության:

38-ամյա կինը պնդում է, որ դպրոցի տնօրենն ու ուսուցիչները վիրավորել ու զրպարտել են իր անչափահաս դստերը, մեղադրել գողություն եւ դրամաշորթություն կատարելու մեջ, ապա հերքել, նվաստացրել երեխային, այնպիսի բարոյահոգեբանական մթնոլորտ ստեղծել, ինչի պայմաններում երեխայի ուսման շարունակության հարցը տվյալ հաստատություններում անհնար է. «Երեխայիս մեղադրել են ուսուցիչների անուններով զանգեր կատարելու մեջ, այն դեպքում, երբ իրենց կողմից նշված հեռախոսահամարը նշված ժամանակահատվածից էլ շատ առաջ գոյություն չի ունեցել, ռուսերենի ուսուցչուհին դասարանի աշակերտների ներկայությամբ ասել է, թե՝ քո նմանին մայրը պիտի թույն տա, որ խմես, սատկես: Իմ ներկայությամբ երեխային ասել են, թե՝ դու մայր ունենալու իրավունք չունես»:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի իրավաբան Արայիկ Զալյանի խոսքերով, ձայնագրության մեջ տեղ են գտել նաեւ հետեւյալ արտահայտությունները, որոնք ակնհայտորեն վիրավորանք են: «Թամարա Ադամյանը ուսուցիչներից Սյուզաննա Սահակյանին հարցրել է, թե՝ ամբողջ դասարանի մոտ, դուրս գալուց էլ ձեռքներդ մեկնել եք ու ասել եք, թե քեզ նմանին պտի մայրդ թույն տա, որ սատկես, Սյուզաննա Սահակյանն էլ իր հերթին պատասխանել է՝ հա, ասի՝ ես քեզ նմանը ունենայի, ես չէի..., սատկի չեմ ասել, մեռնի եմ ասել»:

Թամարա Ադամյանը դատարան էր ներկայացրել իր եւ ուսուցչական կազմի հետ դպրոցում տեղի ունեցած խոսակցության ձայնագրությունը, որը, սակայն, ապացույց չի համարվել:

«Ձայնագրությունը չի պարունակում այնպիսի տեղեկություններ, որոնց հիման վրա հնարավոր կլիներ պարզելու եւ հաստատելու ներկայացված պահանջները»,- նշված է վճռում:

Հակառակ սրան՝ Թամարա Ադամյանի ներկայացուցիչ Արթուր Սաքունցը պնդում է, որ դատարանի՝ ձայնագրությունները չգնահատելն անհասկանալի է եւ չի բխում օրենքի սահմաններից: «Ելնելով սույն վերծանման բովանդակությունից՝ կարելի է գալ այն եզրակացության, որ դատարանի կողմից գործում եղած մի շարք ապացույցներ բազմակողմանի, լրիվ եւ օբյեկտիվ հետազոտության չեն ենթարկվել»,- ասում է Արթուր Սաքունցն ու ուշադրություն հրավիրում մի շարք հանգամանքների վրա, որոնց, ըստ նրա, դատարանը գնահատական չի տվել:



Ա. Սաքունցի կողքին տուժող երեխայի մայրն է:




«Ոչ անձնական օգտագործման տարածքներում, որտեղ տեղի են ունենում նման երեւույթներ, այդ վայրերում ցանկացած արտահայտություն, առավել եւս՝ ուսուցիչների ներկայությամբ, հրապարակային է: Դատարանը գնահատական չի տվել այն հանգամանքին, որ դպրոցի տնօրենի սենյակը հանրային տարածք է, այն հանգամանքին, թե այդ ինչպես եղավ, որ Մարիամ Ադամյանը հենց ապրիլի 29-ից միանգամից կտրուկ սկսեց այդպիսի վարքագիծ դրսեւորել: Դատարանը պարտավոր էր անդրադառնալ դպրոցի ղեկավարության՝ երեխայի նկատմամբ ունեցած վերաբերմունքի փոփոխությանը, մանավանդ որ, նրանք էլ հաստատեցին, որ մինչ այդ երեխայից դժգոհություններ չեն ունեցել»:

Ավելին, Սաքունցի խոսքերով, ծնողները դիմել են ոստիկանություն, այսինքն՝ հրապարակայնացվել են երեխայի «կատարածները», ինչի արդյունքում երեխայի նկատմամբ բացասական հասարակական կարծիք է ձեւավորվել:

«Նման մթնոլորտում երեխայի՝ դպրոցում ֆիզիկապես գտնվելն արդեն անհնար է դարձել: Եթե վիրավորանք, զրպարտանք եղած չլիներ, հնարավոր կլիներ երեխայի ուսման հետագա շարունակությունը, բայց ուսման հետագա շարունակությունը իրապես հնարավոր չի եղել, դա արդեն հուշում է, որ եղել է նման վերաբերմունք, որը նույնպես դատարանի կողմից գնահատականի չի արժանացել»,- պարզաբանում է Արթուր Սաքունցը:

Հակառակ սրան՝ դատարանում ուսուցիչներ Նատալյա Նալբանդյանի ու Սյուզաննա Սահակյանի ներկայացուցիչ, փաստաբան Ռուբեն Հակոբյանը պնդում է, որ, ըստ էության, դատարանի կայացրած վճիռը օրինական է, հիմնավորված եւ պատճառաբանված:

«Անգամ, եթե պայմանականորեն ընդունենք, որ հայցվորի ու նրա դստեր պատիվն ու արժանապատվությունն արատավորող արտահայտություն կատարելու, ինչպես նաեւ իրականությանը չհամապատասխանող փաստացի տվյալներ ներկայացվելու փաստերն առկա են, ապա նույնիսկ այդ պարագայում սույն գործով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի իմաստով վիրավորանքի եւ զրպարտության մասին խոսք լինել չի կարող, քանի որ հայցվորի եւ նրա դստեր մասին որեւէ հրապարակային արտահայտություն, այն էլ՝ արատավորելու նպատակով, չի կատարվել, հայցվորի եւ նրա դստեր վերաբերյալ փաստացի տվյալներ հրապարակայնորեն չեն ներկայացվել»,- բացատրում է Ռուբեն Հակոբյանը:

ԱՆՈՒՇ ԲՈՒԼՂԱԴԱՐՅԱՆ
Վանաձոր

## Ինչո՞ւ են ոստիկանությունից հեռանում

Ոստիկանության մեր աղբյուրները հայտնում են, որ վերջին շրջանում ավելացել է Երեւանի ոստիկանության պահակապարեկային ծառայությունից հեռացողների թիվը: Ոստիկանությունից դուրս եկողներն ավելի մեծ թիվ են կազմում Կենտրոնի պահակապարեկային բաժնում, քանի որ այստեղ աշխատանքի լարվածությունն ավելի մեծ է: Ոստիկանության համակարգը լքողների թվում ամենից շատ մարզերի բնակիչներն են, որոնք իրենց աշխատավարձից մայրաքաղաքում բնակարանային վարձ են մուծում: Համակարգից հեռանալու հիմնական պատճառը ցածր աշխատավարձն է: Գրեթե ռազմական ռեժիմով աշխատող, ամեն օր փողոցներում տարբեր փորձությունների դիմագրավող ոստիկանների աշխատավարձը, հավելավճարներով հանդերձ, շուրջ 130 հազար դրամ է, կրտսեր սպաների դեպքում՝ 140 հազար դրամ: Սոցիալապես ոչ բարվոք վիճակում գտնվող ոստիկաններին «չի հրապուրում» նաեւ այն, որ մայիսի 6-ից հետո իրենց հրաման կարող է տրվել ցրել հետընտրական ցույցերի մասնակիցներին:

## Թալանել են Խաշթառակի մանկապարտեզը



Մարտի լույս 19-ի գիշերը թալանել են Իջեւանի տարածաշրջանի Խաշթառակ գյուղի մանկապարտեզը: Գողերը տարել են նախադպրոցական հաստատության գազօջախը, լվացքի մեքենան, սառնարանը, ամաններ լվանալու սարքավորումը, հեռուստացույցը, թվային նվագարկիչը, երաժշտական կենտրոնը: Խաշթառակի գյուղապետ Հայկ Քամալյանն ասաց, որ գյուղապետարանը 2010թ. մարտ-ապրիլ ամիսներին «Վորլդ վիժն» կազմակերպության աջակցությամբ մանկապարտեզը կահավորել է արդիական սարքավորումներով: Կողոպտիչները հանդուգն են եղել, որ կարողացել են այդքան սարքավորում դուրս բերել մանկապարտեզից:

ՌՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

## «Արտֆուդ» Արտաշատի պահածոների գործարանի հայտարարությունը

Վերջին շրջանում սննդի անվտանգության տեսչությունը տարածել էր հաղորդագրություն, որ Արմֆուդ ապրանքանիշով կաթնամթերքի արտադրամասը չի համապատասխանում սանիտարահիգիենիկ նորմատիվներին, որից հետո որոշակի լրատվամիջոցներ թյուրիմացաբար Արմֆուդի փոխարեն հիշատակել էին Արտֆուդ բառը եւ այսպիսով խեղաթյուրել հայտարարությունը՝ շփոթության մեջ գցելով սպառողներին:

Սույնով տեղեկացնում ենք, որ Արտֆուդը ոչ մի կապ չունի Արմֆուդի հետ եւ, որ Արտֆուդի արտադրական մասը ամբողջովին բաղկացած է ժամանակակից եվրոպական սարքավորումներով, ինչը թույլ է տալիս ապահովել բարձրակարգ սանիտարահիգիենիկ պայմաններ, որի արդյունքում եւ արտադրանքի մի մասը արտահանվում է եվրոպական երկրներ:

### ՎիվաՍել-ՄՏՍ-ում՝ Samsung Galaxy Nexus սմարթֆոն

ՎիվաՍել-ՄՏՍ-ն ուրախ է տեղեկացնել, որ այսուհետ ՎիվաՍել-ՄՏՍ-ի սպասարկման կենտրոններում կարելի է ձեռք բերել նոր՝ Samsung Galaxy Nexus սմարթֆոնը:

Samsung Galaxy Nexus-ն ապահովված է այնպիսի բացառիկ հնարավորություններով, ինչպիսիք են՝ HD Super AMOLED էկրանը, գրավիչ դիզայնն ու սմարթֆոնի անգերազանցելի աշխատանքն ապահովող գերարագ dual core պրոցեսորը: Իսկ Android 4-ի ընձեռած հարուստ հնարավորությունների շնորհիվ այս սմարթֆոնը նվաճել է անգամ ամենապահանջկոտ հաճախորդների սրտերը:

Սմարթֆոնն արժե 349000 դրամ: Ձեռք բերելով այն՝ կարելի է մասնակցել «Սմարթ բոնուս» ծրագրին եւ ստանալ 174500 դրամ բոնուս: Ինչպես միշտ՝ հեռախոսը կարելի է ձեռք բերել նաեւ ապառիկ:

## Աջափնյակում փականներ են տեղադրվում

Մարտի 20-ին, ժամը 10.00-24.00-ը դադարեցվել է Աջափնյակ վարչական շրջանի Վշտունի եւ Խ. Խաչատրյան փողոցների ու նրբանցքների, Բաշինջաղյան, Լենինգրադյան, Ջանիբեկյան, Կարապետյան, Ռուստոմյան, Ա. Սարգսյան, Մարտիրոսյան, Չուխաջյան, Հասմիկի, Մելիքյան, Միրաքյան, Սպորտի, Գ. Զոհրապ, Լեւոնյան, Եղիազարյան, Առաքելյան, Հակոբյանց, Լենինականի, Թերլեմեզյան փողոցների եւ հարակից տարածքների ջրամատակարարումը: Պատճառը Լենինգրադյան եւ Բաշինջաղյան փողոցների երեք հատվածներում միաժամանակ շինարարական աշխատանքների իրականացումն է: Երկու դիտահորերում փոխարինվում են հետագա շահագործման համար ոչ պիտանի փականները, իսկ երրորդում, փականից բացի, տեղադրվում է ջրի ճնշման կարգավորիչ: Կնշանակի արդեն այսօրվանից՝ մարտի 21-ից, Աջափնյակի այս հատվածում ջուրը կբաշխվի ավելի արդյունավետ, իսկ ճնշումը կկարգավորվի, ինչի շնորհիվ սպառողների ջրամատակարարումը կլինի ավելի կայուն ու հուսալի:

Ըստ «Երեւան Ջուր» ՓԲԸ «Արեւմուտք» շահագործման տնօրինության «Մաշտոց» տեղամասի գլխավոր ճարտարագետ Էդգար Հայրապետյանի՝ այսուհետ ոչ միայն վթարների կամ շինարարական աշխատանքների դեպքում ջրազրկումները կլինեն հնարավորինս սահմանափակ, այլեւ հոսակորուստների հայտնաբերումը կդառնա ավելի դյուրին, ինչպես նաեւ կստեղծվեն պայմաններ նշված տարածքում ջրամատակարարման հետագա բարելավման համար:

«Երեւան Ջուր» ՓԲԸ հաղորդակցության բաժին

# «Ակադեմիականները» տպավորվել են հայ վոկալիստներով

Վերջերս երկօրյա այցով առաջին անգամ Հայաստան էին ժամանել Գերմանիայի Լյուբեկ քաղաքի Երգչախմբային ակադեմիայի գեղարվեստական ղեկավար Քրիստոֆեր Բյոնկեն եւ կոմպոզիտոր, դաշնակահար Միխայիլ Բաուխը: Այցի նպատակն էր ակադեմիայի բազմազգ երգչախումբը լրացնել նաեւ հայազգի վոկալիստներով: Լսումները կայացել են Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում:

«Առավոտը» հանդիպեց կոնսերվատորիայի Ղ. Սարյանի անվան օպերային ստուդիայի գլխավոր ռեժիսոր, պրոֆեսոր Հովհաննես Հովհաննիսյանի հետ:

Մեր զրուցակիցը հայտնեց, որ այդ արվեստագետները, սկսած 2002 թվականից, յուրաքանչյուր տարի աշխարհի տարբեր երկրների մշակութային օջախներում անցկացված լսումների արդյունքում թարմացնում են շուրջ 100 հոգուց բաղկացած իրենց երգչախումբը: Պարոն Հովհաննիսյանը հայտնեց, որ Երեւանում 30 վոկալիստների ունկնդրումից հետո ընտրել են 5-ին՝ օպերային ստուդիայի մեներգիչներ Սոֆա Սայադյանին, Մանուշ Հարությունյանին, Ռեբեկա Դեմիրճյանին, Պերճ Քարազյանին եւ Արշակ Կուզիկյանին, նշելով, որ սովորաբար մասնագետների համակրանքին են արժանանում 1-2-ը: Պրոֆեսորը տեղեկացրեց նաեւ, որ երգիչների ընտրության հարցում կար սահմանափակում. կանայք չպետք է գերազանցեն 32 տարեկանը, տղամարդիկ՝ 35-ը: Հավելեց նաեւ, որ երգչախմբի համերգները կայանում են ամռան ամիսներին, այս տարի ընտրել են Գերմանիան, Ֆրանսիան եւ Չինաստանը: Կոլեկտիվը հանդես կգա այնպիսի ճանաչված նվագախմբերի հետ, ինչպիսիք են Չինաստանի ռադիո-ֆիլհարմոնիկը, Բրեմենի կամերային նվագախումբը եւ այլն:



Միխայիլ Բաուխը, Քրիստոֆեր Բյոնկեն եւ Հովհաննես Հովհաննիսյանը:

Հարցին՝ գերմանացի արվեստագետների երեւանյան այցը իրե՞նց նախաձեռնությամբ էր, Հովհաննես Հովհաննիսյանն ասաց. «Անցյալ տարի Շոտլանդիայի թագավորական ակադեմիայում անցկացված ունկնդրումից հետո մեր հյուրերին հիացրել են Երեւանի կոնսերվատորիայի շրջանավարտ, օպերային ստուդիայի մեներգիչ, այժմ Թագավորական ակադեմիայում վերապատրաստվող Անուշ Հովհաննիսյանի կատարումները, ումից եւ տեղեկացել են հայկական վոկալ դպրոցի եւ դրա «մեղավոր» Երեւանի կոնսերվատորիայի մասին: Փաստորեն մեր երգչուհու վոկալի եւ բարձրարվեստ կատարումներն են պատճառ հանդիսացել գերմանացիների՝ առաջին անգամ մեր երկիր այցելելու համար»: Ռեպլիկին՝ փաստորեն, թեկուզ ժամանակավոր, երգչախմբի արտիստ են դառնում մեներգիչները, մեր զրուցակիցն ասաց, որ կոլեկտիվի ծրագրում կան նաեւ օպերաների համերգային կատարումներ, որոնց պարագայում մեներգիչներ են անհրաժեշտ:

Հետաքրքրվեցինք՝ օգտվելով առիթից, հյուրերին ծանոթացրե՞լ եք հայ երգչախմբային արվեստին եւ ինչքանո՞վ էին նրանք ծանոթ մեր մշակույթին: «Նրանց նվիրեցինք հայ խմբերգային դասական երաժշտության առաջին մեծակտավ ստեղծագործությունների՝ Եկմալյանի եւ Կոմիտասի պատարագների CD-ները, ինչպես նաեւ հոգեւոր երաժշտության գանձարանից Մեսրոպ Մաշտոցի, Սահակ Պարթեւի, Մովսես Խորենացու եւ մյուսների երգերի, շարականների, տաղերի ձայնագրությունները: Պարոնայք Բյոնկեն եւ Բաուխը ցանկություն հայտնեցին առաջիկայում ծանոթանալ ժամանակակից հայ կոմպոզիտորական արվեստին եւս, հետագայում երգչախմբի կատարումները հայ հեղինակների երկերով համալրելու նպատակով»,- ասաց Հովհաննես Հովհաննիսյանը՝ ավելացնելով, որ հյուրերը տպավորված էին Հայաստանի պատմությամբ, նրանց ապշեցրել էր Մայր աթոռ սուրբ Էջմիածնի հոգեւոր կենտրոնը:

ՍԱՄՎԵԼ ԴԱՆԻԵԼՅԱՆ

# Ֆրանսիական դեսպանատունն ու ԿԳՆ-ն ուզում են լիցեյ բացել

Հայաստանում մարտ ամսից մեկնարկել են ֆրանկոֆոնիական միջոցառումները, որոնք կշարունակվեն ապրիլին ու Երեւանից բացի, կընդգրկեն ՀՀ մարզերը: ՀՀ-ում Ֆրանսիայի դեսպան Անրի Ռենոն այդ ամենը որակում է ֆրանկոֆոնիական գարուն:

Հայաստանին 2008 թվականից շնորհվել է Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության ասոցացված անդամի կարգավիճակ, իսկ այս տարվա Կինշասայի գագաթաժողովին մեր երկիրը կդառնա լիիրավ անդամ:

Երեկ Հայաստանում Ֆրանսիայի դեսպանատանը այս թեմայով խոսեցին ՀՀ-ում Ֆրանսիայի դեսպան Անրի Ռենոն, ՀՀ արտգործնախարարի ֆրանկոֆոնիայի հարցերով խորհրդական, դեսպան Քրիստիան Տեր-Ստեփանյանը եւ Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության նախագահությունը ստանձնած երկրի՝ Շվեյցարիայի դեսպան Կոնստանտին Օբոլենսկին: Ֆրանսիայի դեսպանը մի քանի նախադասություն հայերեն արտասանելուց հետո ներկայացրեց ֆրանկոֆոնիական հարուստ ծրագիրը՝ դասական, ժամանակակից եւ այլ ժանրերի երաժշտության երեկոներ, համերգներ, թատերական ներկայացումներ, որոնցից դեսպանը շեշտեց Բիզեի «Կարմենի» երեւանյան համերգային կատարումը, ֆիլմի ցուցադրություն, որին ներկա կլինի ռեժիսոր Սերժ Ավեդիքյանը, հեքիաթի փառատոն, անգամ Վ. Բրյուսովի անվան լեզվաբանական համալսարանի կողմից կազմակերպված վազքի մրցումներ, գիտաժողովներ ու զանազան միջոցառումներ՝ բուհական շրջանակների, մասնավորապես, Հայաստանում ֆրանսիական համալսարանի գործուն մասնակցությամբ:

«Ֆրանկոֆոնիան ասես գեղեցիկ ծաղկեփունջ լինի, որտեղ յուրաքանչյուր ծաղիկ իր դերն ունի ծաղկեփունջը կատարյալ դարձնելու առումով»,- պատկերավոր ասաց Ֆրանսիայի դեսպանը, հիշեցնելով, որ Ֆրանկոֆոնիան՝ որպես շարժում, միավորում է 75 պետություն, 220 մլն մարդ էլ ֆրանսերեն է խոսում աշխարհում:



Քրիստիան Տեր-Ստեփանյանն էլ փաստեց, որ եթե 2008-ին Հայաստանում Ֆրանկոֆոնիայի միջազգային օրվա միջոցառումները մեկ շաբաթում ավարտվեցին, 2010-ին դրանք տեւեցին 2 շաբաթ, 2011-ին՝ շուրջ մեկ ամիս, այս տարի՝ համարյա 3 ամիս, ընդգրկելով դպրոցները, բուհերը, մշակութային օջախները, Երեւանն ու մարզերը:

Հայաստանում Ֆրանսիայի դեսպան Անրի Ռենոն անդրադարձավ դեսպանատան միջոցով, ՀՀ ԿԳ եւ արտգործնախարարությունների աջակցությամբ ֆրանսերենի քարոզմանը, ինչը կարտահայտվի նաեւ երեւանյան 10 հանրակրթական դպրոցներում շաբաթական 3-ի փոխարեն 6 ժամ խորացված ֆրանսերեն ուսուցանելով: «Հայաստանը դիմել է Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպությանը լեզվաբանական դաշնագիր կնքելու խնդրանքով»,- շեշտեց պարոն Ռենոն: Դեսպանը խոսեց նաեւ առաջիկայում Հայաստանում ստեղծվելիք ֆրանսիական լիցեյի կարեւորության մասին, ասելով՝ «Դա ծրագիր է, որի վրա լրջորեն աշխատում ենք ԿԳ նախարարության հետ՝ որպես դեսպանատուն»:

Հարցին՝ ե՞րբ այն կկենսագործվի, դիվանագետը պատասխանեց. «Խոսքը վերաբերում է այնպիսի ծրագրի, որը պետք է համոզիչ լինի, քանի որ երեխաների համար է... Մենք աշխատում ենք հետեւյալ սկզբունքով՝ արագ գնալ, բայց շատ չշտապել»,- հավելեց դեսպանը, սակայն հստակ ժամկետներ չնշեց: Նա նաեւ ասաց, որ այդ թեմայով վերջերս նորից հանդիպում է կայացել ԿԳ նախարարի հետ:

ԳՈՀԱՐ ՀԱԿՈԲՅԱՆ

# «Հայ առաքելական եկեղեցին գովազդի կարիք չունի»

## Ասում է Սուրբ Երրորդություն եկեղեցու հոգեւոր հովիվ տեր Եսայի քահանա Արթենյանը

- Ի՞նչ են իրենցից ներկայացնում աղանդները:

- Աղանդները լինում են քրիստոնեական, ոչ քրիստոնեական, արեւելյան եւ այլն: Թեեւ մեծ մասը հանդես է գալիս որպես քրիստոնեական աղանդ, ըստ էության, մերժում է Քրիստոսին եւ քրիստոնեությունը, ինչպես, օրինակ՝ «Եհովայի վկաները», մորմոնները: Աղանդները շեղում են ճշմարիտ կամ ուղղափառ ուղուց: Նրանց հիմնական նպատակը դրամ վաստակելն է՝ բիզնեսը, հասարակության քայքայումը եւ Հայաստանում կամ որեւէ այլ երկրում լրտեսական գործունեություն ծավալելը:

- Հայաստանում գրանցված է 67 կրոնական կազմակերպություն: Ինչո՞ւ է պետությունը թույլատրում նրանց քարոզչություն ծավալել եւ առավել եւս՝ գրանցում է նրանց:

- Այդ 67 կրոնական կազմակերպությունները աղանդներ չեն: Հայաստանում աղանդներն ավելի շատ են՝ 100, գուցե՝ 200: 67-ից մոտ 10-ը Մայր աթոռին պատկանող կրոնական կազմակերպություններ են՝ հայորդաց տներ, երիտասարդական միություններ: Մնացած 57-ից շատերը միեւնույն աղանդավորական կազմակերպություններն են՝ գրանցված տարբեր անուններով: Օրինակ՝ «Կյանքի խոսքը» կարող է գրանցված լինել 3-4 տարբեր անուններով՝ «Երեւանի «Կյանքի խոսք», «Վանաձորի «Կյանքի խոսք», Ռեյմա, Էմանուել: Պետությունը աղանդներին գրանցում է, որովհետեւ համաձայնագիր ունի Եվրոպայի հետ: Ժողովրդավարություն կառուցելու ճանապարհին եւ Եվրախորհուրդ մտնելու առաքելությամբ Հայաստանը պարտավոր է ապահովել ինչպես մարդու իրավունքների պաշտպանությունը, խոսքի ազատությունը, այնպես էլ՝ կրոնի ազատությունը: Շատ երկրներում «Եհովայի վկաներին» չեն գրանցում, բայց երբեք չեն ասում, թե դրանք ժողովրդավար պետություն չեն: Այս ամենը քաղաքականացված է: Հստակ օրինակ է Բայաթյանի դատը՝ ընդդեմ Հայաստանի: Տարիներ առաջ վերջինս զորակոչվել էր բանակ, չէր գնացել եւ դատվել էր: Հետո դիմել է ԵԴ, որտեղ հայցը հօգուտ նրա է վճռվել, ու Հայաստանը տուգանք է վճարել 20.000 եվրո: Ստացվում է, որ պետությունը «ստիպված» է պարգեւատրել դասալիքներին:

- Կարծիք կա, թե եկեղեցին աղանդավորների դեմ պայքարելու համար ոչ մի քայլ չի ձեռնարկում:

- Եկեղեցին աղանդավորների դեմ պայքարելու հատուկ մարտավարություն չունի, եւ դա նրա առաքելության մեջ չի մտնում: Եկեղեցու առաքելությունը ավետարան քարոզելն է:

- Աղանդավորական կազմակերպությունները հսկայական գումարներ են ծախսում: Ովքե՞ր են հովանավորում նրանց:

- Ըստ իրենց՝ այդ գումարները հավատացյալների կողմից վճարված տասնորդներն են: Բոլոր աղանդներն ունեն տասնորդներ, որը պարտադիր է, թեեւ ամրագրված չէ որեւէ օրենքով: Անհրաժեշտության դեպքում նրանք օրինակ են բերում այն, որ Հին Կտակարանում գրված է, թե տասնորդը պարտադիր է: Աղանդները քողարկում են բիզնեսը: Եվ քանի որ եկեղեցիները ազատված են հարկերից, հետեւաբար՝ նման բիզնես ունենալը շահավետ է, ունեն գրանտներ, թեեւ օրենքը արգելում է նյութական հոսքերը:

- Վերջերս մի շարք հայտնի դեմքեր խոսեցին նմանատիպ կազմակերպություններում իրենց ներգրավվածության մասին: Ո՞րն է գայթակղությունը:

- Օրինակ՝ երգիչ Գոռ Սուջյանը խոստովանեց իր զղջման մասին, իսկ Միհրը շատ պարզ ասաց, որ եթե եկեղեցին իրեն չի օգնում, այդ դեպքում ինչո՞ւ գնալ դեպի եկեղեցի: Շահագրգռությունն այն է, որ նրանց օգնում են տեսահոլովակներ նկարել, PR անել եւ այլն:

Ես չեմ դատապարտում այդ մարդկանց, բայց նաեւ չեմ ընդունում, որ իրենք ակամայից հոգեորսության առիթ, միջոց են դառնում:

- Կան բազմաթիվ երիտասարդաց միություններ, ինչո՞ւ է դրանց մասին քիչ խոսվում:

- Գրեթե բոլոր եկեղեցիները ունեն նման միություններ: Դրանք կազմակերպում են համակարգչային, անգլերենի, լրագրության եւ մի շարք այլ դասընթացներ: Հայ առաքելական եկեղեցին գովազդի կարիք չունի: Մեր գործը մարդկանց հոգսերով եւ կարիքներով զբաղվելն է:

ԱՆԻ ՕՀԱՆՋԱՆՅԱՆ

VIVAcell MTS ԷՋԻ ԳՈՐԾԸՆԿԵՐՆ Է

# Մեկնարկեց նաեւ տղամարդկանց Եվրոպայի առաջնությունը

Երեկ Բուլղարիայի Պլովդիվ քաղաքում մեկնարկեց շախմատի Եվրոպայի տղամարդկանց 13-րդ անհատական առաջնությունը: Մարտի 31-ին հայտնի կդառնա ինչպես նոր չեմպիոնի անունը, այնպես էլ, թե ովքե՞ր են լինելու այն 23 շախմատիստները, որոնք աշխարհի գավաթի խաղարկությանը մասնակցելու իրավունք կնվաճեն:

Այս մրցաշարում, որին մասնակցող 350 շախմատիստների կեսից ավելին գրոսմայստեր է, իսկ 15-ը 2700 եւ ավելի անհատական գործակից ունի, գործում են մի քանի խիստ կանոններ: Նախ՝ մրցակիցներին արգելվում է մինչեւ 40-րդ քայլը ոչ-ոքիի համաձայնել: Երկրորդ՝ ուշացման համար շախմատիստին անմիջապես պարտություն է գրանցվում: Եվ երրորդ՝ առաջին անգամ կիրառվում է Եվրոպայի շախմատային միության վերջերս սահմանած եւ օրերս Գազիանթեփում անցկացված Եվրոպայի կանանց առաջնությունում առաջին փորձությունն անցած, այսպես կոչված, դրեսս կոդը, որը կարգավորում է մասնակիցների արտաքին տեսքը:

Առաջնության ընդհանուր մրցանակային ֆոնդը 100 հազար եվրո է, որով նախատեսված է 25 դրամական պարգեւատրում (1-ին տեղ՝ 14 հազար եվրո, 2-րդ տեղ՝ 11 հազար, 3-րդ տեղ՝ 9 հազար, 4-րդ տեղ՝ 7 հազար եւ այդպես՝ մինչեւ 25-րդ հորիզոնականը):

Հայաստանից Եվրոպայի առաջնությանը Բուլղարիայում մասնակցում են գրոսմայստերներ Սերգեյ Մովսիսյանը, Վլադիմիր Հակոբյանը, Գաբրիել Սարգսյանը, Տիգրան Լ. Պետրոսյանը, Ռոբերտ Հովհաննիսյանը, Սամվել Տեր-Սահակյանը, Զավեն Անդրիասյանը, Արման Փաշիկյանը, Հրանտ Մելքումյանը, ՖԻԴԵ-ի վարպետ Հովհաննես



Գաբուզյանը, ինչպես նաեւ Վլադիմիր Պողոսյանը: Եվս երկու հայ գրոսմայստերներ՝ Սերգեյ Գրիգորյանցը եւ Արթուր Գաբրիելյանը, ներկայացնում են Ռուսաստանի Դաշնությունը:

Վիճակահանությամբ առաջին տուրում հայաստանցի շախմատիստները կազմել էին հետեւյալ զույգերը:

Սերգեյ Մովսիսյան- Միոդրագ Պերունովիչ (Սերբիա)

Սքայլթ Անդրեասս Հագեն (Դանիա)-Վլադիմիր Հակոբյան

Հովհաննես Գաբուզյան-Գաբրիել Սարգսյան

Տիգրան Լ. Պետրոսյան-Բուրակ Ֆիրաթ (Թուրքիա)

Արման Փաշիկյան- Քրիստիան Բրաուն (Գերմանիա)

Ռոբերտ Հովհաննիսյան-Մարկո Կոդենոտի (Իտալիա)

Գեորգի Ֆիլեւ (Ռուսաստան)-Զավեն Անդրիասյան

Սամվել Տեր-Սահակյան-Ալեքսանդր Չուդինովսկիխ (Ռուսաստան)

Վլադիմիր Պողոսյան-Գաբոր Պապպ (Հունգարիա)

Ա. ՀԱԿՈԲՅԱՆ



Հավելված N 1
ՀՀ արդարադատության նախարարի
2011 թվականի դեկտեմբերի 1-ի
N 203-Ն հրամանի

«Հավելված N 1
ՀՀ արդարադատության նախարարի
2009 թվականի դեկտեմբերի 22-ի
N 319-Ն հրամանի

Ձև

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի «02» մարտի 2012թ. որոշմամբ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
«Ավե» Միջազգային Բարեգործական Հիմնադրամի
2011թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի լրիվ անվանումը՝ "ԱՎԵ" Միջազգային Բարեգործական Հիմնադրամ

1.1. Գրանցման համարը՝ 22216001185 | 1.2. գրանցման ամսաթիվը՝ 12.02.2010թ.
1.3. Գտնվելու վայրը՝ ք. Երևան, Կասյան 3, բն. 18
1.4. Հեռ. 010 - 27-17-71 | 1.5. Բջջ. 091-48-75-57 | 1.6. Կայք: Չունի | 1.7. Էլ. փոստ: b.tadevosyan@concern-energomash.am

2. Հիմնադրամի գործադիր մարմնի ղեկավարը՝
Բելլա Թադևոսյան, 2011թ. ընթացքում Հիմնադրամից ստացել է աշխատավարձ 390,000 դրամի չափով:

3. Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամները՝
1. Դավիթ Առաքելյան, 2. Արամ Նավասարդյան, 3. Բաբկեն Թադևոսյան հիմնադրամի միջոցներից չեն օգտվել:

4. Աշխատակազմը՝
Հիմնադրամը բացի տնօրենից այլ աշխատակիցներ չունի:

5. Իրականացված ծրագրերը՝
2011թ-ի ընթացքում Հիմնադրամի կողմից որևէ ծրագիր չի իրականցվել և ստացված դրամշնորհը օգտագործվել է Հիմնադրամի ընթացիկ գործունեությունը ապահովելու համար:

6. Ֆինանսական աղբյուրները՝
"Կոնցեռն-Էներգոմաշ" ՓԲԸ, ընթացիկ ծախսերի ֆինանսավորում, 1,250,000 դրամ

7. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը՝ 507,500 դրամ | ՀՀ դրամ

7.1. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերը չափը՝ | -

8. Ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտ իրականացնող անձի անունը ազգանունը (անվանումը): Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունները աուդիտի չեն ենթարկվել, քանի որ ակտիվները չեն գերազանցում 10 միլիոն դրամը:

9. Հիմնադրամի տնօրեն | 9.1. Բելլա Թադևոսյան

10. Գլխավոր հաշվապահ | 10.1.

# Հեռու չէ այն օրը, երբ յուրաքանչյուր հայաստանցի ոստիկանին ընկալելու է որպես իր իրավունքի պաշտպան

Երկար դարերի ընթացքում պետականության բացակայությունը եւ տարբեր կայսրությունների կողմից Հայաստանի գաղութացման տխուր հանգամանքը, ցավոք, մեզանում ի մեծի մասամբ ձեւավորել է իրավապահի բոլորովին թյուր մի ընդհանրական կերպար, ըստ որի՝ ոստիկանությունն ընկալվում է նախեւառաջ որպես պատժիչ գործառույթ իրականացնող մի մարմին՝ ոչ թե օրինապահ քաղաքացու, հասարակ մարդու շահերն ու իրավունքները պաշտպանող պետական կառույց, այլ նրա պոտենցիալ հակառակորդ:

Եթե սրան գումարենք նաեւ այն, որ վերջին տարիներին, այսպես կոչված, «գողականության» քարոզչությունը, իբր տիրող իրականության ռեալիստական արտացոլման «բարի» նպատակներով, ուղղակի սկսել է հորդել տարբեր հեռուստաալիքներով հեռարձակվող սերիալներից, որտեղ հասարակության վզին փաթաթվող եւ դրական ներկայացվող «հերոսն» անպայման պետք է որոշակի «գողական» նիստուկաց կամ սովորույթներ ունենա եւ խոսի համապատասխան գռեհիկ լեզվով, իսկ երթուղայիններում ու ռեստորաններում՝ որպես «ընտիր ճաշակի» նշան, անպայման հնչի «Վլադիմիրսկիյ ցենտրալը», ապա նման «դաստիարակություն» ստացող նոր սերնդի համար այս ամենի դեմ պայքարելու կոչված ոստիկանը հաճախ ուղղակի ենթագիտակցորեն սկսում է ընկալվել որպես մշակութային հակոտնյա, մի յուրօրինակ օտար տարր: Ըստ որում, շատ հաճախ մոռացության է տրվում նաեւ այն հանգամանքը, որ բազմաթիվ ոստիկաններ իրենց կյանքը նվիրաբերել են մեր Հայրենիքի ազատագրման գործին՝ հերոսաբար կռվելով արցախյան մարտադաշտերում եւ ՀՀ սահմաններում:

Ահա, հաճախ հասարակական հենց նման նիհիլիզմի եւ աներդարացի անվստահության պայմաններում է, որ հայաստանյան իրավապահը ստիպված է աշխատել եւ հիմնականում պատվով ու ազնվորեն իրականացնել օրենքի եւ քաղաքացու պաշտպանի իր առաքելությունը՝ Հայաստանը եւ մեր մայրաքաղաքը դարձնելով, չեմ վախենա ասել, աշխարհի ամենաապահով վայրերից մեկը: Նշվածն, իհարկե, առաջին հերթին արդյունքն է մեր ժողովրդի եւ հասարակության գիտակցության բարձր մակարդակի, որը բարեբախտաբար դեռ լիովին չի ենթարկվել վերոհիշյալ քարոզչության քայքայիչ ախտահարմանը, բայց անուրանալի է նաեւ մեր ոստիկանության ներդրումն այս հարցում:

Սրանում լրացուցիչ համոզվելու մի առիթ ներկայացավ բոլորովին վերջերս, երբ կողոպտիչը, ջարդելով մեքենայիս ապակին, ներ-




գրեն հափշտակեց տարիների աշխատանքիս արգասիքը հանդիսացող գիտական նյութեր եւ թարգմանություններ պարունակող դյուրակիր համակարգիչս: Երեւան քաղաքի Կենտրոնի ոստիկանության քննչական բաժանմունքի աշխատակիցների արձագանքն օպերատիվ էր, ծայրաստիճան հստակ եւ խիստ մասնագիտական: Հենց նրանց ձեռնարկած պրոֆեսիոնալ գործողությունների արդյունքում էլ ընդամենը օրեր անց համակարգիչը հայտնաբերվեց, իսկ կողոպտիչը ձերբակալվեց: Բացի դրսեւորած բարձր մասնագիտական որակներից, չթաքցնեմ, ինչոր առումով անսպասելի էր հատկապես այն վեհ մարդկային վերաբերմունքը, որին արժանացա մեր իրավապահների կողմից: Ոչ աշխատանքային օրով, ուշ երեկոյան, դժվարին գործողության իրականացումից հետո էլ նրանք իրենցից կախված ամեն ինչ անում էին ինձ՝ ՀՀ հասարակ քաղաքացուս, ցնկացած անհանգստությունից զերծ պահելու եւ իրենց սրտացավ վարքով ու պահվածքով մեր ոստիկանի ու ոստիկանության հանդեպ լրացուցիչ վստահություն ու համակրանք ներշնչելու համար՝ մեկ անգամ եւս անաչառորեն հաստատելով անցյալ տարի ոստիկանության կոլեգիայի նիստին ՀՀ նախագահի հնչեցրած այն միտքը, որ «հեռու չէ այն օրը, երբ յուրաքանչյուր հայաստանցի ոստիկանին ընկալելու է որպես պետության ու պետականության, ապահովության ու բարեկեցիկ կյանքի, ուժի ու արդարության, իրավունքի ու օրինականության խորհրդանիշ, մարդու իրավունքների պաշտպան»: Մարդկային եւ մասնագիտական բարձր որակներով օժտված հենց նման իրավապահների առկայությունն է, որ արդարացված հույս է ներշնչում, առ այն, թե ոչ հեռու ապագայում անպայմանորեն ձեւավորվելու է քաղաքացի-ոստիկան եւ հասարակություն-ոստիկանություն հարաբերությունների բոլորովին նոր մշակույթ ու ավանդույթ:

ՎԱՐԴԱՆ ՈՍԿԱՆՅԱՆ

Երեւանի պետական համալսարանի դոցենտ

R